զինաց և ծանօթ լինիլ Օրինաց և կարգաց զի-
նուորութեան խորհրդոյն պաշտօնէի, վերջա-
պէս եթէ ասացից նման սոցայ ունեմ բազում
նշաւակ տալոյ ձեզ, որպէս հաւատացեալ եմ որ
ոչ սկսանի գործ 'ի Շարժմանէ բնութենէ մերմէ
մինչ նախ ոչ տպաւորեսցի 'ի մէջ մտաց մերոց
թէ զինչ կամք մեր է գործելոյ, և ոչ ոք գործ
ձեռաց մերոց ոչ 'ի կատար հասանել կարէ՝ եթէ
չիցէ գործեցեալ ըստ կարգի և ըստ սովորու-
թեան սահմանի, ուրեմն ոչ գոյ իր զինչ և իցէ
'ի ներքոյ արեգական 'ի յերեսս երկրի և 'ի մէջ
ծովու որ Շարժի մինչ ոչ ունիցի սահմանս Օրի-
նաց. երկայնամիտ լեր ընթերցող և նայեա աչօք
և 'ի միտ առ բանականութեամբ և 'ի զօրու-
թենէ հոգւոյ սահմանն յօրինեալ 'ի Տեառնէ
արարչէն մերմէ և միայնոյ ճարտարապետէ, թէ-
պէտ ոչ ոք զիտաց զկամս նորայ և ոչ ոք խոր-
հրդակից նմայ, այլ ինքն միմիայն կատարեալ
և անսղալելի ամենափառ և ամենակարող Աս-
տուածն համայնից բարեպէս զիտաց զի սահ-
ման 'ի մէջ ստեղծագործութեան իւրոյ հարկա-
ւոր է, որում ետ սահման ընթանալոյ ստեղ-
ծուածոց իւրոց 'ի գործ և ոչ անցանէ, այսպէս
հարկաւոր է նայիլ քեզ և ճանաչել զանազանու-
թիւն մի ընդ միւսոյն, և հակառակութեան միոյ
ընդ դէմ միւսոյն չորս տարերաց, թէ որպիսի
ըստ սահմանի համայ յամեաւին այս անհաշ-